№ 135 — ՏԱՐԵԿԱՆ ՎԱՂՎԱ ՕՐԱԹԵՐԹ — № 135

ՄԱՐՏԻՆ, ՀՈՒՆՎԱՐԻ 20 (փետ. 1), 1892

ԱՐՁԱԳԱՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

(ԱՐՁԱԳԱՆՔ ՏԱՐԵԳԻՐՔ)

Հրատարակութիւն «ՆՇԱՆԱԳԻՐ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կէս տարուան՝ 6 ռ., երեք ամսուան՝ 3 ռ. և մի ամսուան՝ 1 ռուբլի:

«ՆՇԱՆԱԳԻՐ» ՕՐԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ

Տարեկան՝ 7 կոպէկ:

Ընդունուում են բոլոր տպագրական և լրագրական գործերի պատուէրներ:

Խմբագիր-հրատարակիչ՝ Ստեփան Ներսիսեան.

Տպարան «Արձագանգ».

Typ. Ardzagang. Redaction „Ardzagang“.

Тифлисъ, Редакція „Арзагангъ“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՆՇԱՆԱԳԻՐ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՏԱՐԵԳԻՐՔ

ՏԱՐԵԿԱՆ ՎԱՂՎԱ ՕՐԱԹԵՐԹ — № 135

ՄԱՐՏԻՆ, ՀՈՒՆՎԱՐԻ 20 (ՓԵՏ. 1), 1892

ՖԵԼԻԵՏՕՆ

ՏՓԼԻՍ — Ամսոյ վեցերորդ օրը՝ ուրբաթ, ցերեկուան ժամը 2-ին, Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ՝ ի յիշատակ հանգուցեալ Ներսէս Արքեպիսկոպոս Աշտարակեցւոյ, որ ուրբաթ առաւօտեան ժամը 8-ին վախճանեցաւ Ս. Ծննդեան հիւանդանոցում: Ներսէս Արքեպիսկոպոսի մահուան լուրը մեծ ցաւ պատճառեց ոչ միայն Թիֆլիսի հայ հասարակութեան, այլ և ամբողջ Կովկասի հայութեան, որ նրան յարգում էր իբրև ազգային մեծ գործիչ, իբրև հոգեւոր հովիւ, որ իր ամբողջ կեանքը նուիրել էր ազգի ծառայութեան: Ներսէս Արքեպիսկոպոսի մահուան լուրը ցաւ պատճառեց նաեւ Թիֆլիսի ռուսական հասարակութեան, որ նրան յարգում էր իբրև ազգային մեծ գործիչ, իբրև հոգեւոր հովիւ, որ իր ամբողջ կեանքը նուիրել էր ազգի ծառայութեան: Ներսէս Արքեպիսկոպոսի մահուան լուրը մեծ

чета за 1873 годъ по лечебницѣ.

3) Краткое извлеченіе изъ отчета за 1874 годъ по лечебницѣ.

4) Краткое извлеченіе изъ отчета за 1875 годъ по лечебницѣ.

5, 6, 7) *Хамбанман աշխատութիւններ* 1876, 1877 և 1878 *թուականների վերաբերեալ։*

Նորա վերջին գրաւոր երկն է.

8) О движеніи больныхъ лечебницы, учрежденной Тифлисскими гражданими въ память 4 апрѣля 1866 г. за 1883 годъ.

Ի բոլոր սրտէ շնորհաւորելով մամուլի ներկայացուցիչներին, որ նոցա շրջանն ընդլայնանում է այսպիսի մի փորձառու, բարձրաստիճան և գիտնական անձնաւորութեամբ, ցանկանում ենք մեր նոր գինակցին արժանի հանդիսանալ պ. Տիգրան Նազարեանցի դափնիներին և միշտ լիշել՝ qu'on n'est jamais trahi que par les siens!

* * *

Ներքին գործոց նախարարութիւնը հրատարակել է հետևեալ կարևոր ազդը, որ առանձին նշանակութիւն ունի և Կովկասի համար։

Ներկայ տարւոյս մարտի կիսից, երբ ստացուեցաւ ստոյգ տեղեկութիւն խօլերայի գոյութեան մասին Հերթոում, կառավարութիւնը ի նկատի առնելով որ խօլերան կարող է ռուսաց կայսրութեան սահմանները մտնել և տարածուել, կարևոր կարգադրութիւններ արաւ վերոյիշեալ ախտի դէմ մաքառելու համար։ Ի միջի այլոց գարնան սկզբում ձեռք առնուեցան զանազան միջոցներ կայսրութեան մարդաշատ տեղերի առողջապահական պայմանները կարգաւորելու, ախտի տարածման առաջն առնելու, և բժշկակիրներին բժշկական օգնութիւնն հասցնելու համար։ Ապա արդէն և տեղական վարչական ու հասարակական հաստատութիւնները, ըստ պահանջման հանգամանքների, կարիքների և պայմանների, իրենց կողմից միջոցների ձեռնարկեցին հնդախտի դէմ մաքառելու համար։

Ներկայումս, անցեալ փորձերի հիման վրայ, հնարաւոր է հանդիսանում գտնել նախ, թէ այս կամ այն տեղում որպիսի առանձին պայմաններն աւելի նպաստել են ախտի տարածման կամ արգելք են եղել յաջողութեամբ նորա դէմ մաքառելու. երկրորդ՝ թէ գոյ գրած միջոցներից, որոնք աւելի արդիւնաւոր են եղած և դիւրաւ ու յարմարութեամբ գործադրելի, և երրորդ՝ թէ ախտի դէմ պատերազմելու ծրագիրը մինչև որ աստիճան կարելի է դիւրացնել առանց վնասելու գործին և յարմարեցնելով ունեցած զրամական միջոցներին, և բացի այս ծրագիրը հասցնել յանկարծ միօրինակութեան, որ անհրաժեշտ է կենդրոնական իշխանութեան գործադրուած միջոցների վրայ յաջողութեամբ հսկել կարողանալու համար։

Ելնելով առաջ ունենալով այն հաւանականութիւնը, որ հնդախտն առաջիկայ տարի կը վերածնի, վերոյիշեալ խընդիրների որոշումը պէտք է կատարուի հանգամանօրէն ամենակարճ միջոցում, որպէս զի իւր ժամանակին հնդախտի դէմ մղելի պատերազմի ծրագիրը հաղորդուի պատշաճ հաստատութեանց, որոնք կարող լինին գարնան սկզբին պատրաստել ինչ որ կարևորն է վերոյիշեալ մաքառումն իրագործելու համար։

Այս նպատակին հասնելու համար շատ ցանկալի է ի միջի այլոց ունենալ այն մարդոց հաշիւները, որոնք մասնակցել են հնդախտի դէմ մրցմանը անցեալ ամառ, և որքան մանրամասն կը լինին այդ հաշիւներն ու տեղեկութիւնները, այնքան աւելի բազմակողմանի կերպով կարելի կը լինի վճռել վերոյիշեալ խընդիրները։ Այսպիսի հաշիւները կազմելու եղանակը թեթևացնելու համար կազմուում է առանձին ծրագիր։

Իբրև լրումն այդ հաշիւների շատ կարևոր է ունենալ վերոյիշեալ խնդիրների վերաբերմամբ և՛ այն անձանց կարծիքները, որոնք անձամբ փորձել են այս կամ այն միջոցի գործադրութեան արդիւնաւորութիւնը խօլերալի դէմ։ Ա. ւելորդ գրագրութեանց ու գործի ձգձգման առաջն առնելու համար ներքին գործոց պ. նախարարը վերոյիշեալ տեղեկութիւններն ստանալու համար աւելի համապատասխան է համարել, ընտրութեամբ տեղական բարձր իշխանութեան, Ս. Պետերբուրգ հրաւիրել առ 13-ն դեկտեմբերի ներկայ տարուայ խօլերալից վնաս կրած իւրաքանչիւր նահանգից 1—2 բժիշկ, որոնք անմիջապէս մասնակցած են հնդախտի դէմ մաքառելու և որոնք աւելի ծանօթ են տեղական պայմաններին և կարիքներին։ Հրաւիրուած բժիշկներ ստանալու են օրական 5 ռուբլի սննդի ու բնակարանի համար, որքան օր որ մնան Ս. Պետերբուրգում, և ճանապարհորդութիւնը ձրի պիտի լինի։

Մտադրութիւն կայ Ս. Պետերբուրգ ուղարկուած բժիշկներին հաղորդել ախտահանութեան պարզ և պատշաճ միջոցներ, իսկ ցանկացողներին և՛ հիւանդների արտաթորած բակտերիոսկոպիկական հետազօտութեան եղանակը։

Բժիշկների վերոյիշեալ ժողովի պարապմանց ծրագիրը հրատարակուած է։

Ներքին գործոց նախարարութեան բժշկական դեպարտամենտը պարտք է համարում վերոյիշեալը հաղորդելու իւ գիտութիւն կայսրութեան բժշկներին և խնդրելու նրանց, որոնք ունին նիւթ և դիտողութիւններ, որ կարող են նպաստել ժողովի ծրագրի այս կամ այն խնդրի որոշման, չմերժեն ուղարկելու շուտով Ս. Պետերբուրգ յանուն բժշկական դեպարտամենտի կառավարչի. հարկ չկայ որ առանձին խնամքով մշակեն իրանց գրուածքի ձևը և բացատրութեան ոճը. ուղարկուածը կարող է լինել հում և չմշակած նիւթ։

ԳԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ

(«Մուրճ»-ի թղթակիցը գրում է)

Ներկայ տարւոյս օգոստոսի 20-ին, Տօքօլսկի նահանգական դատարանում քննվում էր Տաճկահպատակ Եղիայի որդի Խունիկի և պարսկահպատակ Իվանի որդի Լազարի ու Մ'իխայէլի որդի Եռեխանի գործը, որոնք մերադրվում էին խարբերդցութեան մէջ։ Այս գործը ցոյց է տալիս թէ որքան ռուս հասարակ ժողովուրդը և մինչև անգամ գիւղական եկեղեցական պաշտօնեան է զէպի այն անձինք, որոնք ժողովարարութիւն են անում չօգուտ Երուսաղէմի տաճարի։ Գործի հանգամանքը հետևեալն է. 1891 թ. ամառը Տօքօլսկի նահանգի գիւղերում ու աւաններում շրջում էին երեք Յոյներ, կրօնաւորի զգեստով և ժողովում էին նուէրներ չօգուտ Երուսաղէմի տաճարի. առնում էին զրամ, իրեղէններ, առաւելապէս քաթան, և նուիրատուներին առաջարկում էին իրանց անունները դրել առանձին մատեանում, որով նոցա անունները պիտի յիշուին Երուսաղէմի տաճարում աստուածպաշտութեան ժամանակ։ Նուէրներ հաւաքելու հետ միասին այս Յոյները վաճառում էին և կրօնական պատկերներ, փոքրիկ խաչեր և այլն։

1891 թուի յուլիսի 22-ին Կարաչենց գիւղով անցնելիս նոցանից մէկը մտաւ տեղական գաւառական գրագիր Սօկօլովի տունը և առաջարկեց նրան գրքում գրել իւր նուիրատուութիւնն ու անունը, բայց երբ իմացաւ, որ Սօկօլովը գաւառական գրագրի պաշտօն է վարում, խրլեց մատեանը նորա ձեռքից ու փախաւ։ Այս հանգամանքն առիթ տուեց տանուտէրին ստուգելու թէ Յոյների պրաճ ժողովարարութիւնը որ աստիճան օրինաւոր է։ Անցագիրներին նայելով երեւեցաւ որ Յոյներից մէկը տաճկահպատակ Իլիայի որդի Խունիկն էր, իսկ միւսները պարսկահպատակ էին՝ մէկը Իվանի որդի Լազարը և երկրորդը Մ'իխայէլի որդի Եռվանը։ Նոցա մօտ գտնուեցան՝ 1) նուիրատուութեանց մատեան, որից երեւեցաւ, թէ սոքա ժողովարարութիւն են արել՝ Սարատովի, Սամարայի, Օրէնբուրգի, Ուֆիմի, Պերմի և Տօքօլսկի նահանգներում, և մի քանի գիւղերում նուիրատուեղած են և՛ եկեղեցականներ. իսկ մի քանի եկեղեցականներ և գիւղական տանուտէրներ մինչև անգամ սրբագործել են Յոյների ժողովարարութիւնը, մատեանների վրայ ստորագրելով, թէ նրանց թոյլատրուում է շրջելու Ճխի մէջ. 2) երկու մատեան, որոնք պարունակում են, մերադրեալների ցուցման համեմատ, գրութիւններ։

Այս գրքերի բովանդակութիւնն առանց բացատրութեան մնաց, որովհետև Պետերբուրգից պահանջուած վերոյիշեալ մատեաններում գրուածքների թարգմանութիւնն անկատար մնաց. 3) 22 հատ երեսսրբիչ, 10 սփռոց և 318 արշին քաթան։ Պրոսկուրեակովայեա և Վակօրինա գիւղերի բնակիչները ցոյց տուին, որ Յոյները խնդրում էին նուէրներ Երուսաղէմի տաճարի համար դրամով և քաթանով, խոստանալով նուիրատուներին յիշել այդ տաճարում։

Ֆոն-Զիդեր-Կորնի քննութիւնը վերին աստիճանի յաջող հետևանքներ ունեցաւ։ Պարզուեցաւ որ ժողովարարները դործելիս են եղել 1888 թուականից ընկասա, երբեմն իրանց՝ Երուսաղէմի տաճարի սարկաւագ և երբեմն էլ արեզակ անուանելով, մինչև անգամ կրում էին կրօնաւորներին յատկացրած զգեստ ու խոստանում էին Երուսաղէմի տաճարում նուիրատուների հոգւոյ փրկութեան համար աղօթել Երուսաղէմի տաճարում։

Մեղադրուողները մերժում էին իրանց յանցաւորութիւնը և պատմում էին, որ իրանք միմեանց հանդիպել են Սարատովում, որտեղից ճանապարհ էին ընկել դէպի Սիբիր. իսկ ճանապարհին գիւղական քահանաների թոյլտուութեամբ իբրև աղքատներ իրանց համար էին նուէրներ ժողովում։

Նահանգական դատարանը Իլիայի որդի Խունիկին, Մ'իխայէլի որդի Եռվանին ու Իվանի որդի Լազարին յանցաւոր գտաց՝ առաջնին խարբերների խումբ կազմելու համար և միւսներին նրան մատնակցելու համար և վճռեց զրկելով նրանց ամեն անհատական իրաւունքներից ու արտօնութիւններից, բանտարկել խումբը կազմողին 3 տարի և երեք ամիս ժամանակով, իսկ մասնակցողներին երկու տարով։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

Երեսփոխանական ժողովի երկրորդ նիստը, որ նուիրուած էր մամուլի վերաբերեալ օրինագծին, սկսուեցաւ սօցիալիստ էշենստ Ռօշի ճառով, որ բողոքում էր սօցիալիստների վրայ բարդած մեղադրանքների դէմ։ Ատենաբանն աշխատում էր ապացուցանել որ ոչինչ կապ չկայ սօցիալիստների մէջ։ «Փորձուող ռմբերների համար ոչ թէ հրապարակախօսներին պէտք է պատասխանատուութեան ենթարկել,—աւելացրեց նա,—այլ կառավարութեանը, որ իւր agent provocateur-ների ձեռքով աւելի սատկացնում է խառնաշփոթութիւնը փոխանակ չարիքը արմատախիլ անել ձգտելու։ Չարիքի արմատները պէտք է որոնել սօցիալական և տնտեսական պայմանների մէջ։ Ընդհանականութեան դէմ եղած միակ միջոցը բանուորների վիճակի բարւոքումն է, աշխատանքի համար օրն ութ ժամով սահմանափակելն է»։

Ինառ. «... Սեպհականութիւնն ազատութեան հիմնաքարն է։ Բուրժուա կոչուածներն ամէն բան արել են ժողովրդի համար—նոքա շնորհել են նորան ընդհանուր քուէարկութեան իրաւունք, իսկ այդ իրաւունքի Ֆրանսիայում ընդունելու օրիցն այլ ևս բուրժուազիա չկայ—կան միայն զանազան դասակարգեր։ Բացի այդ բուրժուազիան ձեռք բերեց հաւասարութիւնն օրէնքի առաջ. առհասարակ նա, կրկնում եմ, ամէն բան արել է ժողովրդի համար, բացի մի բանից, այն է՝ նորան ճշմարտութիւնը չէ ասել։

Ով որ պնդում է թէ ժողովրդի դրութիւնը վատացել է, աշխարայ սուտ է խօսում։ Ահա թէ ինչ են ասում միշտ բանուորին, բայց չեն ասում նորան, որ իւր կացութեան պարմանները նա միայն չափաւորութեամբ և համբերութեամբ կարող է բարելաւել։

Բանուորի պահանջած բարենորոգումներն իրանց իրանց գլուխ կըգան, 'ի միջի այլոց և օրական ութ ժամ բանելու պայմանը, բայց ամենայն ինչ ժամանակ է պահանջում և համբերութիւն։ Ժողովը պէտք է պաշտպանէ արդի նախարարութիւնը, որովհետև լաւագոյն կազմակերպութիւն գտնելը դժուար է, նոյնպէս այն պատճառով որ նա ապացուցեց թէ այժմեան հանդամանքների յառաջ բերած ծանր խնդիրներին արժանաւորութեամբ կարող է լուծումն տալ։ Ձախակողմեան կենդրոնը միաձեսակ նախարարութիւն է ցանկանում, և կառավարութիւնը խոհեմութիւն արած կը լինի, եթէ յեղափոխութեան սկզբունքներն անյողդողդ հաչակէ և մերժէ ամէն տեսակ սօցիալիստական վարդապետութիւն, որովհետև անվնաս սօցիալիզմ չկայ։»

Լուբէ. «Չէ կարելի ասել թէ կառավարութիւնը իւր պարտականութիւնը չէ կատարել. հենց որ առաջին ռմբադործութեանց փորձերն սկսուեցան, կառավարութիւնը երեք օրինագիծ առաջարկեց—աստիկանութեան պաշտօնեաների թիւն աւելացնելու՝ մամուլի և ուժգնակով պայքարում գործողների վերաբերութեամբ»...

Կասսանեակ. «Ինչո՞ւ կաբինետի նկատիը չէ դարձնում։»

Լուբէ. «Փոքր ինչ համբերեցէ՛ք։ Ես ոչ ոքի թոյլ չեմ տալ կասկածել իմ դիտաւորութեանց ազնուութեան մասին (Ծափահարութիւններ)։ Սօցիալիստները զրպարտում են Ֆրանսիային, երբ նորա սօցիալական պայմանները մեզայլ գոյներով են ներկայացնում։ Ֆրանսիայի սօցիալական պայմանները շատ աւելի լաւ են, բանուորների վարձը շատ աւելի մեծ է, քան բոլոր միւս եւրոպական տերութեանց մէջ։ Հասարակապետական կուսակցութիւնն այն օրուանից, երբ իշխանութիւնն իւր ձեռքն է, միշտ անդուլ կերպով հոգացել է ժողովրդի բարիքի մասին, բազմաթիւ բարենորոգումներ է մտցրել, սկսած ձրի ուսման օրէնքից մինչև արդէն հաստատած կամ առաջարկելիք օսցիալական օրէնքները։ Ֆրանսիան այժմ այնպիսի ազատութիւն է վայելում, որպիսին երբէք և ոչ մի տեղ չէ վայելել որ և է ուրիշ երկիր (Ծափահարութիւններ)։ Հասարակապետութիւնը, եթէ կարելի է այսպէս ասել, վերականգնեց հայրենիքը։ Ճշմարիտ է, այդ գործը դեռ վերջացրած չէ և դեռ աշխատանք ունինք առաջներիս, բայց այսօր պէտք է զբաղուել այսօրուան համար նշանակած գործով։ Սակայն պէտք չէ խոստանալ ամբոխին այն, որ երբէք կարելի չի լինի իրագործել և ամէն բանից առաջ մենք պարտաւոր ենք ժողովրդին միայն զուտ ճշմարտութիւնն ասել»։

(Ծափահարութիւններ)։

Այնուհետև օրինագծի յայտնի պատճառաբանութիւններն առաջ բերելով՝ Լուբէն աւելացրեց. «Եթէ դուք հրաժարուիք օրէնքն ընդունելուց, ես գիտեմ թէ ինչ է մնում ինձ անել»։ (Աղմկալից ծափահարութիւններ մի ձախ բոլոր անդամներից)։

Դրամատէր. «Ընկերողմեան կուսակցութեան կողմից մերժում եմ մամուլի վերաբերեալ օրէնքը, որովհետև նա սահմանափակում է խօսքի ազատութիւնը և համայականութեան ազատ ասպարէզ է բանում։ Չէ կարելի գրաւումն և ձերբակալութիւնն թոյլ տալ, եթէ մի օրուայ ընթացքում դատաստանական իշխանութեամբ հաստատուած չլինի վճիռը։ Այս է 1819 թ. մամուլի վերաբերեալ օրէնքը։ Ահա յիրաւի ազատամիտ օրէնք։ Ինչո՞ւ է կառավարութիւնը իւր առաջարկած օրէնքը պահանջում, քանի որ ապացուցած է, որ Հարկ եղած ժամանակ նա բաւականաչափ ոյժ ունի ձեռքի տակ։ Չէ որ մայիսի 1-ի նախընթաց օրը նա 150 անիշխանական կալանաւորեց վաղօրօք։ Ազատութեան սահմանափակումը երկսայրի սուր է։ Ես և իմ բարեկանները քուէ կը տանք միայն այն դէպքում, եթէ օրէնքի մէջ մտնէ դատաստանական իշխանութեան հաստատութիւնը ձերբակալութեան համար, նմանապէս վճիռ լինի, որ օրէնքի ներդործութիւնը դադարում է ընտրութեանց ժամանակ։

Դէպի աջ գրած է.

«Ես Ղարայ Գոզա որդի մելիք եավրին Գեղամայ վկայ եմ՝ էս վախմերիս, որ Դատէի առաքելոյն վերայ գրած է հաստատ։

Կնիքը տաճկերէն է։ Գրա ձախ կողմը գտնում է Թաթևացի Մինաս վարդապետի ձեռքը և կնիքը։

Այս ստորագրութիւններից յետոյ նոյն թղթի վրայ աւելի հին ձեռքով և հին մելանով հետևեալն է.

«Թվականն ՈՒՆ. էր գուլս և ապրակս. վախմն տվի Դադէի վանքիս անխաբան... Հասան որդի Վախտանկայ տէր Յաթերքոյ և. այբերդու և Խաչենայ բերդն և Հաւքասլայացին. կացի աւաքութեամբ ամս. իս. շատ պատերազմով յաղթեցի թշնամեաց լմոց աւդնութեամբն Աստուծոյ և եղեն ինձ գ. որդի, գբերդերս և զգաւառս տուս նոցայ և ես եկի ի Վանս. . . այր ի տէր Գրիգոր և ես եղէ կրաւնաւոր բերի զխաչաքարս աղուայ շատ աշխատութեամբ բազում հնարիւք կանկեցի սուրբ նշանիս և իմու չիշատակ։ Արդ վասն ձեր հոգւոյդ որք ընթեռնոյք զիս յաղաւթս չիշեցէք. ով խափանի վախմն չէը հայրապետաց նզոված է»։

Սրանից յետոյ գրութիւնը շարունակելու համար կցւում է այլ թուղթ. կցուածքի վրայ երկու տեղ կարմիր մելանով կնիքներ են խփած հայոց տառերով. չեն կարդացւում հնութեան պատճառով։

Հետևեալ գրութիւնը նոտր տառերով է և պարզ.

«Ես Սետես որդի Գրիգորին թոռն պարոն Հասանայ եառ մեր վանօրէիցն՝ զԱպահէն, զխոթ զխոզենակս իւր. ղ. սահմանոյն զՊարանախաչէն, ի `հէնհացն, ի Զիչապերթէն ի վահէն, շարինց քարէն ի հարցյա զայէն։ Ի չափարին հանդէն Ծադ ունանց ագարագազեռով, Ռոբնշի աղբիւրովն, թոզանանց գետովն. պետրոսպակ որ մեր պապերն են տուեր. զսոխանանց, զծովատեղն, զջաջուռանց, զՁուլպեկանց, զդրտնօտն, զիլըշմանանց, Գրիգորա բաղս դադի վանս իւր քոլատակերովն, հերանանց հակառակաբերդովն, նաւի աղբիւրովն, բերդատարովն, կռապաշտոցովն, ողնովն, խոզենակուց մեծ այգին, մանանա Ծորովն, Ծաղիկանց զեղ. Նարաձանց տվաք Տէր Դիրաւաղ եսկոսպոսին, որ մեր հաւատարիմ էր, քանի իւր պէտք է վարէ, ազատ է, թէ որ այլ մարդ վարէ ժ.անորդն վանքին տայ անպատճառ»։

Նոյն թղթի վրայ նոյն ձեռքով գրած է հետևեալ շարունակութիւնը։

«Ես Հասան որդի Վախտանկա և եղբայր իմ Գրիգոր առաջնորդ սբ ուխտիս ըստ Դադէի վանիցս և սակս Գադմ. Ղբղի—ս և Սմբատ և եղբարքս մեր բաժանեալ տւաք զմեծն Խաչէն սակաս, և երկիրս Ճար ի վերին խաչէն տվաւ Հասանայ և կանդնեցաք խաչ մի մատաղխոյ վիրն բոլոր բիթին սահման խաչենոյ և Ճարայ։ Ես Հասան կացի ավաքութեան համ քառասուն և եղեւ ինձ գ. որդիս և չինեցի գ. բերթս.

Հաթերթաբերթի, Ձիջաբերդ, հաւաքաղային և դաշտաբերթի, Քրերթերս և գգաւառս ետու որդոց իմոց և ես եկի ի վանքս մօտ տէր Գրիգորի և տէր Աթանէսի և եղէ կրօնաւոր և երկրիս հոգանելութեն այս է. Հաթերքոյ գետն ի վեր մինչև ի սարն Ազասաց, Մ'ռաւայ շարագօղն, գա Պարանախաչն հին Հացայ եկեղեցի, սլանտռա եկեղեցին, բերթն Ձիջայ, սարն Վահենոյ, շաքարն, Հարաղաքարն, ընդյա կաշկառն, բերթն մաղրոյ և գետն Հաթերքոյ ամենայն ընչովն և ջուրըն-թացաւն։

Եւ մեք որդիքս և թոռունքս Հասանայ. ես գոնցէս տուին ինձ բերթն Ձիջա, անցաւ ժամանակ ետոյ եկէ ուխտ ի վանքս, տվի իմ հայրենացն խոթոսարն աքարն, Հարաղաքարն, եկեղեցին մարջամանցու մուլքն իւր սահմանքովն, իւր խասովն, իւր ջուրընթացովն վախմ ի գուռս ըստ Դադէի Սուրբ առաքելոյն։ Եւ մերանքս սահմանեցին մեզ գ. օր պատարագ, որ ոք մեր տված վախմն խափանի նզովեալ եղիցի ՅԾԲ հրպցն ամէն Թվն ՈՀ.

Ես Թորէլ թոռն Հասանայ տվաւ ինձ ի հօրէ իմէ ի բերթն Հաւասլազացին երկրին վերին խաչէն, ես իմ կամաւ տվի ժ. հող վախմ վարել ցանել ժողովրդեամբ ամէն տարի պտուղն առնել ի գուռն ըստ Թադէի սուրբ առաքելոցն և սահմանեաց մեզ տէր Գրիգորն գ. օր պատարագ ոչխափանեսցի ամենայն ժամանակ, խափանողն խափանեսցի.

Այստեղ վերջանում է Թերթը, բայց թուում է թէ գրութիւնը շարունակւում է. ամենավերջը խփած կարմիր մելանով կնիքի միայն կէսը կայ, միւս կէսը պոկուած է։

Այժմ արտագրենք Ղաբալայի լուսանցքում եղածը։

«Ես Թադէաց, թոռն մեծին Հասանայ, տվաւ ինձ ի հօրէ իմմէ բերթն Ձիջայ, ԺՍ. չէն և ես եկի ուղտ սբ վանքն ի գուռն սբ առաքելոյն. ես իմ կամաւ տվի վախմ բաժնէն իմմէ գնպատճառով հէն իւր մուլքովն, իւր սահմանքովն ի գետն բարձրակոպն ի ջուրն շարօտին ճանապրհաբաժան, կարմիր բիթն, Վաթաջերայ եկեղեցին իւր սահմանովն, ով ոք գայս խաբանէ նզովեալ եղիցի գհժը հրպցն Թիվն ՈԽԵ.

Ղաբալայի մէջ եղած հատուածներից երևում է թէ որքան առատ նուէրներ են տուել իշխանները, թագաւորազները խոթա վանքին (Թադէ առաքելոյն)։ Եւ մանրամաս գրած են կալուածներն իրենց սահմաններով։ Անցեալ ամառ Գանձասարում ասացին, որ երկրաչափը գալու է այդ վանքի կալուածները չափելու յանձնելու. հետն անշուշտ կըլինեը վանքական կալուածների կապալ ունեցողները, որ ամենայն ինչ ցոյց տան։ Ինչ կլինի արդեօք այդ չափից յետոյ, չգիտենք։ Ինչ որ ասում են, թէ Գանձասարի վանքի կալուածները ամենամեծն են, ստոյգ չէ։ Ամենամեծ կալուածները Գանձասարի վանքինը չեն, այլ Ամարասի վանքինը։ Ամարասի վանքի կալուածները ընդարձակ են Ղարաբաղի մէջ, Ղազախի կողմերում։ Ամարասի վանքի կալուածների մասին ասում են, որ Ղազախի կողմերում մի ամբողջ գաւառ կայ, որ Ամարասի վանքինն է։ Ղազախի կողմերում ամենամեծ կալուածատէրը Ամարասի վանք

Միայն այս եղանակով կառավարութիւնը կ'ապացուցանէ, որ օրէնքը նա պիտի գործադրէ չերաւի միայն անիշխանականների դէմ»։

Երրորդ օրը խօսում է արմատական Պիշօնը. համոզում է չընդունել օրէնքը, որով սահմանափակուում է խօսքի ազատութիւնը։ Դառնալով Դը-Մէնին՝ նա մեղադրում է պահպանողականներին, որ նոքա հասարակապետութեան սկզբունքների դէմ են գործում։ Բայց... «Վօլտէրի որդիքը չեն խոնարհուի խաչակրաց որդոց առաջ, բացագանչում է նա... Մենք ցանկանում ենք եկեղեցու բաժանումը պետութիւնից... Դուք, պ. Լուբէ, խոհեմութիւն արած կը լինէք, եթէ մերժէք աջակողմեանների աջակցութիւնը, ձեր մեծամասնութիւնը ձախ կողմումն է։ Մտածեցէք յեղափոխութեան սկզբունքների մասին, օրէնքը յետ առէք»։

Լուբէ. «Ես չեմ հրաժարուում այդ սկզբունքներից, բայց և այնպէս ինձ մեծամասնութիւն պէտք չէ։ Օրէնքը ես առաջարկեցի լաւ մտածելուց յետոյ, և այդ անելով ես բարի ֆրանսիացու պարտականութիւն կատարեցի և ծառայութիւն արի Հայրենիքին։ Պիշօնի նման առենաբանները միայն գժտութիւն են սերմանում (Ձախակողմեաններ)։ Փոխանակ համերաշխութեամբ հասարակած օգտի համար գործելու ձախակողմեան և աջակողմեան ատենաբանները ամէն կերպ աշխատում են զանազան կուսակցութեանց միջև եղած անդունդը յայնացնել։ Կառավարութիւնը չէ կարող այս կամ այն քաղաքական դրօշոցի ստրուկ լինել, որովհետև նա բոլոր հասարակապետական կուսակցութեան ներկայացուցիչն է (Հաճախական ՝ներ)։ Կառավարութիւնը պատրաստ է պատասխանել ամէն մի մասնաւոր հարցման, բայց պահանջում է որ ժողովն առաջ իւր կարծիքը յայտնէ ժամուլի վերաբերեալ օրէնքի մասին։ Թող փաստեր բերեն ապացուցանելու համար որ կառավարութիւնը չէ գործադրել եղած օրէնքները։ Կարմոյում կառավարութիւնն ամէն միջոց գործ դրեց արիւնհեղութեան առաջն առնելու համար, բայց թոյլ չէ տուել եղած օրէնքները խախտելու։ Նախարարութիւնը վճռել է այսուհետև էլ գործադրել իւր ձրագիրը, որ ազատութիւնն է պահպանում, իսկ սանձաթափութեան չի հանդուրժիլ (Ճախակողմեաններ)։

Լուբէից յետոյ խօսում է արդարադատութեան նախարար Ռիվիերը, որի երկար ճառը լաւ տպաւորութիւն չէ գործում ժողովականների վրայ։ Մի քանի ուրիշ ճառերից յետոյ ժողովը 329 քուէով 228-ի դէմ վճռում է ձեռնարկել օրինագծի քննութեանը յօդուած առ յօդուած։

ԹԻՒՐՔԻԱ.—Օսմանեան կայսերական բանկան, որ հիմնուել է երեք տարի առաջ, այսօրուայ օրը 425 բաժանմունք ունի կայսրութեան մէջ։ Ֆաճկական լրագրների ասելով, այս բանկան միւնչև օգոստոսի վերջը երկրագործներին մէկ միլիօն լիրա (10 միլիօն ռուբլի) վոխատուութիւններ է արել։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Նոյեմբերի 16-ից.

ԼՕՆԴՕՆ.—Չէր-Աֆզուլը յայտնեց, թէ ինքը ազատական էմիրի հպատակն է։ Աբդուրահման խանը, ինչպէս երևում է, գիտէր Չէր-Աֆզուլի դիտաւորութիւնները և աջակցած է նրան։ «Times»-ի թղթակիցը նկատում է, որ այդ լուրը շատ կարևոր է, որովհետև էմիրն իրաւունք չունէր խառնուելու Չիտրալի գործերում։

ՓԱՐԻԶ.—Պարլամենտական քննիչ յանձնաժողովը՝ Պանամայի ջրանցքի վերաբերմամբ լսեց դատաստանական քննիչ Պրինէի ցուցմունքները. Պրինէ մատնանիշ չարաւ և ոչ մի պատգամաւորի վրայ, որ փող ստացած լինէր Պանամայի ընկերութիւնից, և յայտնեց թէ բարօն Ռէյնակ ստացել է այդ ընկերութիւնից մօտ 10 միլիօն. այդ մասին ոչինչ բացատրութիւն չէ գտնուած։

—Նախարարները խորհրդակցում են, որ խնդիրք տան նախագահ Կարնոյին՝ իրանց հրաժարականի մասին։

Նոյեմբերի 17-ից.

ՓԱՐԻԶ.—Նախարարութեան հրաժարականն ընդունուած է։ Նախարարները կը վարեն իրանց գործերը, մինչև նորերի ընտրութիւը։ Ընդհանուր կարծիքն այն է, որ նախարարական ճգնաժամի անցնելը դժուարին է։ Արմատական լրագիրներն ասում են, որ նոր նախարարութեան վիճակը պարզ կը լինի. նա պէտք է լոյս ձգէ Պանամայի ամբողջ գործի վրայ. խուլ կերպով խօսում են պատգամաւորների ժողովի լուծուելու մասին։

ԲՕՄԲԻՅ.—Հնդկաց կառավարութիւնը մտադիր է ուղարկել մի վճռական յայտագիր Աւղանստանի էմիրին՝ և պահանջել նրանից բաւարար բացատրութիւն՝ որ նա խառնուել է Չիտրալի գոյներում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

(Նոյեմբերի 17-ին)

		ի. կ.
Լօնդոն 10 ֆունտն արժէ	. .	101 10
Բերլին 100 մարկը	— . . .	49 67½
Փարիզ 100 ֆրանկը	— . . .	40 15
Ոսկին — — —	արժէ . .	8 11
Մաքսային կարօններ	— . .	162 50
Արծաթ — — —	. .	1 10
Բօրսային գեղջ	— —	4% 5½—%
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի		103 —
— — — 2-րդ	— —	103 —
— — — 3-րդ	— —	› — ›
— — — 4-րդ	— —	› — ›
— — — 5-րդ	— —	› — ›
— — — 6-րդ	— —	102 75
6% ոսկեայ բէնտա		166 25
4% ոսկեայ փոխառութիւն . .	— —	
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— —	
— — — 2-րդ	—	102 75
— — — 3-րդ	—	105 12
Ներքին 5% առաջին փոխառ.		242 50
— — երկրորդ	—	221 75
Պետական. երկաթուղային բէնտա		104 —
5½ բէնտա	— —	
4% ներքին փոխառութեան.		94 87
5% գրաւ. թղթ. Ակն. կալ. բանկի.		102 —
Արք. Ակն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. . .		193 50
Պետերբուրգի քաղաքային վարկի ընկերութ. պարտատոմսեր		101 75
Մոսկուայի քաղ. վարկի պարտատոմսեր — —		101 37
Օդեսայի — —		102 25
Թիֆլիզի — —		98 —
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկ.		102 —
— — Քուրսկի		102 —

Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱՒԳՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԲՈՒՐԳԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

—

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլեթի կայարանում. Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Նոյն տեսակ կառք ուղևորվում է նաև 9 ժամին առաւօտեան, գիշերում է Պասսանաուր կայարանում. իսկ տեղ է հասնում հետևեալ օրը 10 ժամին դիշերուայ։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Նոյն տեսակ կառք ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 5-ին, նոյնպէս առանց գիշերելու տեղ է հասնում հետեւեալ օրը 9 ժամին երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլեթի կայարանում. Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7½-ին երեկոյեան։

Նոյն տեսակ կառք ուղևորվում է առաւօտեան 9 ժամին, գիշերում է Դուդաուր, տեղ է հասնում հետեւեալ օրը 9 ժամին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը 7 ժամին երեկոյեան։

Նոյն տեսակ կառք ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը 8½ ժամին երեկոյեան։

ՌՈՒՍԱՍՏ ՃՈԴԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պօլսի միջեւ։

Հաղո—ից գո—ս է գնո—մ.

Երեքշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4 ին, ուղիղ ընթացքով Սուխումի և Նովօրոսիյսկի վրայով։

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի վրայով։

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 2-ին (շաբաթ գիշերը լոյս կիրակի), շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Հաղո—ի է հառնո—մ.

Չերեքշաբթի օրերը առաւօտեան, ուղիղ ընթացքով կերչի և Նովօրոսիյսկի վրայով։

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստներով։

Կիրակի օրերը գիշերուայ 12-ի ժամին, ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Սուխումի վրայով։

Փոխ—ից գո—ս է գնո—մ.

Փոստային-մարդատար շոգենաւը Դէսսայից ուրբաթ օրերը ցերեկով, իսկ կիրակի օրերը հաթռումից լուսաբացին։

Աղբանոցից—մաքրութ. գին.

Բաթումից դուրս է գնում հինգշաբթի օրերը, ցերեկուայ 2 ժամին, Փոթիի վրայով բոլոր նաւահանգիստները։

Հաթռումից հասնում է հինգշաբթի օրերը կէսօրին մօտ Փոթիի վրայով։

Փոթիից դուրս է գնում ուրբաթ օրերը, դործը վերջացնելուց յետոյ, դէպի Օդեսա, իսկ հինգշաբթի օրերը առաւօտեան 9 ժամին դէպի հաթռում։

Փոթի է հասնում երկուշաբթի օրերը ցերեկով Օդեսայից, իսկ ուրբաթ օրերը երեկոյեան 6 ժամին հաթռումից։

Ընդհանուր դրասենեակը գտնվում է Թիֆլիզի Կալուածական բանկի գալերէյում № № 117 և 118։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացուած է բաժանորդագրութիւն

ԲԱՓՓԻ

	ր. կ.
1) Ջահրումար	2 —
— լոյս տեսնելուց յետոյ.	2 50
2) Վէպլիկներ և Պատկ. հ. II.	2 —
— լոյս տեսնելուց յետոյ.	2 50
3) Երկուսը միասին. . . .	4 —
— լոյս տեսնելուց յետոյ.	5 —

Յանկացողները կարող են դիմել հեղինակի այրիին հետևեալ հասցէով. Тифлисъ. Сергіевская улица, д. Сисицева. № 20, **Анна Меликъ-Акопянъ РАФФИ.**

(Խմբ.) (3—2)

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

և

Վաճառվում է բացառապէս Կենդրոնական գրավաճառանոցում

ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵՑՒ

ՀԱՅՈՑ ԳԻՐՔ

Բաղկացած 400 երեսից, և 8 վիմատիպ նկարներով. պակուած է Սահակ-Մեսրոպեան մրցանակով. Գինն է 1 ռ. 50 կ., դումարով գնողներին 15% զեղչ.

(Խմբ.) (10—8)

ՀԱՅՑԿԱՆԱՆ ԹԱՏՐՈՆ

ԹԻՓԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Երկուշաբթի, նոյեմբերի 23-ին,

ՀԱՅ ԳԵՐԱՍՏԱՆԱԿԱՆ ՄԾԵՏԱԿԱՆ

ԽՈՒՄԲԸ

ԿՂ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

Ի ՆՊԱՍՏ

Գ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

ԶԷՅԼՕԿ

կամ

ՎԵՆԵՏԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Կօմեդիա 6 պատկերով, հեղ. Վ. Չէյքսպիրի, թարգ. Գ. Բարխուդարեանի։

Կըմաննակեցեն՝

տ. Մելիքեան, օր. Վարդուհի. պ. պ. Վրոյր, Զարդուկեան, Պետրոսեան, Աբէլեան, Յարութիւնեան, Ստեփանեան, Ադայեան, Արաքսեան, Աբրահամեան, Հաս..Քալալեան, Տէր-Պաւթեան, Պար.-Սարգսեան։

Դերձողութիւնները անցնում են Վենետկում և հեղինակում։

Տեղերի գինը սովորականն է։

ՍԿԻԶԲԸՆ Է 7½ ԺԱՄԻՆ

(128) (2—1)

ԲԺՇԿԱՐԱՆ

Թարգմ. գերմաներէնից, բժշկապետ

ԼԻՒՈՆ ՏԻՓԻՐՆԵՒՆՑԻ

Բժշկարանին կից է բժշկական ռուս-հայ բառարան։ Ծախվում է ԹԻՓԼԻԶՈՒՄ կենդրոնական գրավաճառանոցում և ԵՐԵՒԱՆՈՒՄ պ Էմին Տէր-Գրիգորեանի մօտ։ Գինն է 2 ռուբլի։

(102) (10—9)

Parfumerie Ganterie

MODES

H. BERLEMONT

COIFFEUR

de S. A. I. le Grand Duc

MICHEL NICOLAÉVITCH

Bonneterie pour hommes. Chapeaux pour dames. Fleurs, plumes. Maroquinerie, ciseaux, rasoirs. Cravates, mouchoirs. Brosserie. Parfumerie française et anglaise des premières maisons.

Salon de coiffures pour dames.

Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ամենալն ճշդութեամբ։

Берлемонъ, Дворцовая улица.

(91) (100—23)

Նրա մասին ինչպէս ասեցի, լիշատակութիւն արել են շատ համառօտ կերպով Զահլամեանց վ., Բարխուտարեանց վ. և Ջալալեանց սրբազանը։ Պ. Լէօն և պ. Հայկունին, որոնք Աղուանից աշխարհի գլխաւոր աղբիւրների ու հովասուն անտառների մասին մեծ հատորի չափ ուղեգնացական ակնարկներ են գրել, գլացել ու խորթի աչքով են նայել առանց այն էլ որբացած Խոթայ վանքի վրայ։ Նրա մասին կարեկցութեամբ համառօտ խօսում է Հանդ. Բաֆֆին, որ ամբողջութեամբ մէջ ենք բերում.

«Բազդասար մետրապոլիտը ջանք առաւ խլելու Մէհտի խանի Խուրշիդ անունով դստեր և ուրիշ թուրք բէկերի ձեռքից Խոթա վանքի լայնատարած կալուածները։

Դատը մի քանի տարի տևեց մինչև կարողացաւ յետ խլել Խոթա վանքի 150,000 դես. չափ կալուածները, որոնք թարթար գետի հիւսիս և հարաւ ափերն են բռնում և ընդհանուր անունով կոչւում են Դոդ-խու Քալ բաջար, Լևայ և Մարջունակ։ Դատավարութեան համար ծախսուել է, ասում են, 30,000 մանէթ։

Խոթայ վանքի կալուածները, այդ միլիօնների արժէք ունեցող ազգային մեծ հարստութիւնը, կարելի է մի ամբողջ պաւառ համարել։ Նրանց մէջ բացի հրաշալի, կուսական անտառներից, բացի ընդարձակ արօտատեղիներից ու լեռնեըրից, բացի լայնատարած և արգաւանդ վարելահողերից զետեղուած էին թուով 100 գիւղեր։ Նրանց լեռների բարձրաւանդակների վրայ և հովիտներում թափառում էին թուով մինչև 20 զանազան խաշնարած ցեղեր զանազան անուններով։ Դրանք Խոթա վանքին չնչին հարկ էին վճարում. եթէ ասեմ որքան. շատ ծիծաղելի կլինէր։

Բացասար մետրապոլիտը արդարև թողեց ազգի համար մի մեծ հարստութիւն, բայց նրա անպիտան յաջորդները հետզհետէ վատնեցին այդ հարստութիւնը»։

Բաֆֆու այդ տողերին հետևում է հետևեալ ծանօթութիւնը.

«Մեր 1881 թ. Սիւնեաց աշխարհի հանապարհորդութեան մէջ. որ պեռ լոյս չէ ընծայուած, մի օր կը կարդան Ղարաբաղի վանքապատկան կալուածների թշուառ գրութեան նկարագիրները ընդհանրապէս, իսկ Խոթայ վանքի կալուածների բարբարոսաբար վատնումը մասնաւորապէս։ Իսկ այժմ այսքանը կասենք, որ Բազդ. մետրապոլին մահից յետոյ էջմիածնի բարձր հոգ. իշխանութեան անհոգութիւնից և Ղարաբաղի թեմ. առաջնորդների մի քանիսի կաշառակերութիւնից Խոթայ վանքի կալուածների մի մասը դարձեալ անցաւ Մէհտի խանի Խուրշիդ անունով դստեր ձեռքը, մի մասին տիրեց դեներալ Հասան բէկ Ղալարովը, մի մասը անցաւ ուրիշ բէկերի ձեռը, մի մասը ևս անտէր անխընամ մնալով տիրեցին կամ մասնաւոր մարդիկ և կամ արքունի գանձարանը։

Այժմ զուտ անվիճելի կալուածք Խոթայ վանքի տիրապետութեան ներքոյ մնացել է մօտ 100,000 դես. իսկ մնացեալ կէսը վիճելի է և այդ մի քանի տարի է, որ հոգևոր կառավարութիւնը սկսել է նորից դատ վարել, գուցէ յետ դարձնէ իր կորուստը։ (Խամս. մել. եր. 305)։

Հասկանալի է Հանդ. Բաֆֆու ադար զայրոյթը Խոթայ կալուածների անլինամ զրութեան մասին։ Այս տողերը գրել է 7—8 տարի առաջ, այժմ արդեօք բնչպէս են վերաբերում դէպի այդ հոյակապ կալուածքը։

—

Որ հեղգ ժառանգներս մեր նախնեաց վոյթ և եռանդը չունինք ոչ միայն պայծառ դիրքի մէջ պահելու հինաւրեայ եկեղեցիքն ու վանքերը, կիսափուլ բերդերը, այլ և մեր անտարբերութեամբ թոյլ ենք տուել բարդուելու իրար վրայ վնասակար զգացմունքները ու ցեցի, ուտիչի նըման հանգամանքներ, այդ արդէն աշխարայ է։ Յաւօք սրտի յիշում եմ մի վանահօր խօսքերը։ Երբ նրա խնամքին յանձնուած վանքը այցելելով, տեսայ ձեռագիր զրքերը խոնաւ տեղ թափած, ցեցերը ջիվջիում են թերթերի ծալերով, տեսայ եպիսկոպոսական, կաթողիկոսական թանգագին զգեստները թոզում, փոշում թափթփած, թագերը և միւս մասերը ճխլտած ու մի անկիւն ածած, պատերի քարերի արանքները խոտերով և թուփերով կոխած, տեղի համարելով համարձակուեցի հարցնել.—«Հայր սուրբ, 7—8 տարի է, դուք այս հռչակաւոր վանքին ինչական էք նշանակուած, ինչու՞ ձեռագիրներն ու զգեստները այնտեղ են փտում, սրբազան տաճարն էլ այստեղ է վլւում։ Մի՞թէ դժուար է խոտերը պոկել տալ և թանկագին հնութիւնները չոր տեղ պահել, թէկուզ ձեր սենեակում»։

Նա արհամարհական կերպով ասեց.

—Ջարմանում եմ վարժապետների խելքի վրայ. մի՞թէ չհասկացան որ նրանով ազգ չի փրկուիլ. ինչ՞ու են պէտք. փճանում են փճանան. տուն մաղչափ գարդ կանե՞մ։ Ինձ ասա, գառներդ ինչպէս են, երինջներից ծնել ե՞ն. ինչքան եղ, պանիր ես շինում. ես քեզ կը պատասխանեմ, վառ Աստուծոյ, լաւ են։

—Ուրեմն եթէ վանքը հօտ ու նախիր էլ ունի, աւելացրի ես, պէտք է աւելի լաւ աչք բռնէք։

—Վանքին ո՞վ է տուել մալ, ապրանք. դրանք իմ էս ջանիս սեպհականութիւնն են, պատասխանեց լինքնագոհութեամբ Հայր սուրբը։ Ես էլ հետաքրքիր չեղայ իմանալու թէ ո՞վ է տուել նրան այդ մալ, ապրանքները, եթէ ուխտաւորները չեն տուել։

Խոթայ վանքի նորոգող և կաթողիկէն շինող բարեպաշտ Արզախաթունի (Չաթերքի թագուհու) մասին կիրակոս պատմագիրը ասում է.

«Արզախաթուն, կին Վախտանկայ Չաթերքեցւոյ, բազում ինչ օժանդակ եղև, արար և վարագոյր գեղեցիկ դստերովք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին զարմանալի տեսողաց, ի մագոյ այնից կակղագունից, ներկեալ պէս պէս և զանազան. գործ քանդակեալ և նկարեալ պատկերօք, հշդրտագոյն հանուածովք, տնօրինականօք Փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր չտեսողսն։ Եւ որք տեսանէին օրհնութիւն տային Աստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն ուստայնանկութեան և հանճար նկարակերտութեան... Եւ ոչ այս եկեղեցւոյս (Դետկայ) միայն արար ծածկոյթ, այլ և այլոց եկեղեցեաց—Հաղբատայ և Մակարաց վանից և Դատի վանուց (Խոթայ վանքի), քանզի յոյժ սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ կինն...»։

Չետաքրքիր էր իմանալ թէ հայ քաղաքների ու գաւառների մէջ ձեռագործով պարապող որ չանասէր վարժուհին իւր խելացաս աւագ աշակերտուհիների հետ մտածեց ու ասեղնագործեց մի փորուրար, կամ գլխաս հայկական ծաղկանկարներով, հայ տառերով և հոգաբարձութեան միջոցով նուիրեց այն եկեղեցուն, որի գաւթումն է գպրոցը, կամ որի կոպեկներով կառավարւում է գպրոցը։ Մեր սուրբ եկեղեցիների մէջ (ոչ թէ գաւառների, այլ և նահ. քաղաքների) շատ սպասներ կան թանկ գներով առնուած. ամենն էլ օտարի շէնք, օտար ճաշակով։

Ճաշակ ու գեղեցկութիւն երևում են այն իրերի մէջ, որոնք հին են ու հայ մատների արգիւնք։ Եկեղեցական զգեստները արժան չեն ձեռք բերում, նրա ամեն մի մասը տասնեակ ռուբլիներ են նստում աղքատ եկեղեցիների վրայ։ Արժէ դէթ մի անգամ համեմատել հին լաչ ու խաչվառները նորագոյնների հետ, որ խելամուտ լինինք թէ ինչքան առաւտաճեռն ենք անճաշակ, օտարաշունչ իրեր դնելու մէջ։

Ուրիշ անգամ կը գառնանք այդ հարցին. այս երկտողն էլ առիթ տուեց գրելու Սրբախաթուն շնորհալի և բարեպաշտ թագուհին, որ փառք ու պատիւ էր համարում վանքերի համար վարագոյր գործելը։

Գ—ճալեանց Ս.

18 նոյեմբ. 1892 թ.
Ախալքալաք։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՏՈՒԱԾՈՑԿԱՆ (ՊԱՏԻ) ՕՐԱՑՈՑՑ

1893 թ.

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊԵԿ։

Ձանապարհի ծախքով 75 կոպէկ։ 100-ով առնողին 20%։

ԳԻՒՏ ՔԱՀ. ՂԱԶԱՆՑԱՆՑ.

10—3

Թիֆլիզի Հայոց Հրատարակչական Ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ իւր հրատարակութեամբ մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Ընկերութեան գրասենեակում և կենդրոնական գրավաճառանոցում հետևեալ նոր գրքերը.

	Ռ.	կ.
№№ 47 Հոսհոսի ձեռատետրը, Պատյտ մը Պօլսոյ թաղերուն մէջ, Յ. Պարոնեանի.	1	—
50 Սամսոյ Նռեր, Գարեգին սարկաւագի	—	50
51. Ջաւախքի բուրմունք, Ե. Լալայեանի	—	25
52. Գաստիարակութիւն Սպենսերի.	1	—
53. Մրուռան, Զմիգոի	—	20
54. Խան-Միրան, Սէյլանի	—	20
55. Տարա-Բուլբա, Գոգոլի	—	40
57. Երկու քոյր, Ղ. Աղայեանի	—	25
58. Գրախտի ընտանիք, Խրիմեան Հայրիկի	—	60
59. Սիրաք և Սամուէլ, Խրիմեան Հայրիկի	—	50
60. Փորձանքների բժշկարան, Բրօքէրի	—	20
61. Մակբեթ, Շէքսպիրի.	—	50

Գրավաճառները կանխիկ վճարելով օգտվում են 20% զեղչով. ճանապարհածախսը Ընկերութեան վրայ է։

(120) (5—3)

ԵՂԻ. ՏԻՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆՆԵՐԸ

Պատիւ ունին ծանուցանելու պ. պ. վաճառականներին, կոմիսիօներներին և առևտրական գործակալներին, որ Ն./Ժ. Սեպտեմբերի 1-ից ԲԱԳՈՒ ՔԱՂԱՔԻՈՄ ԲԱՑ ԵՆՔ ԱՐԵԼ ԿՈՄԻՍԻՕՆԵՐԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ, ԱՐՏԱՀԱՆԱԿԱՆ և ամեն տեսակ ՁԱՆՁՆԱՐԱՐՈՐԻՒՆՆԵՐ կատարելու համար գրասենեակ։ Մասնաւորապէս կատարում ենք նաև նաւթային գործեր։

Մենք յարաբերութիւն կ'ունենանք ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ, ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ երկրների և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գլխաւոր քաղաքների յետ, ի մէջն այլոց Հաշտարախանի, Նիժնի-Նովգորոդի, Մոսկուայի և Օդեսայի և Կովկասեան բոլոր նշանաւոր քաղաքների ուղերկութ. կայարանների հետ։

Մեր կողմից ոչ մի ջանք չպիտի խնայենք, որ ապրանքների դնելը, վաճառելը, ուղարկելը կատարուին բարեխղճութեամբ և շուտափոյթ

ՄԵՐ ՊԱՏՄԱՆՆԵՐԸ ԿԸԼԻՆԻՆ ՄԱՏՉԵԼԻ և ՁԵՌՆՏՈՒ

Եղբարք Տէր-Նիկողոսեաններ։

Իսկ հեռագրելու՝ Baky Termikos.

(76) (6—6

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ

ԹՈՎՄՍ ՄԵԾՈՓԵՑՒ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԳԻՆՆ Է 25 Կ.

Նոյն հեղինակի մեծ երկասիրութիւնները.—

	Ռ.	կ.
1) Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց Ա. և Գ. գիրք. (բ. տպաւեալ). Վիէննա 1877. գինն է	2	50
2) Հայոց հեթանոսական կրօնը. Վաղարշապատ 1879. գին.—		50
3) Դրաբառի խոնարհումը. Թիֆլիս 1881. գինն է . . . . .—		25
4) Դրաբառի հոլովումը. Թիֆլիս 1881. գինն է . . . . .—		15
5) Ծաղկաքաղ արձակ և չափածոյ բանից ի պէտս վարժարանաց, յերիս շրջանս. Թիֆլիս 1881 . . . . . .—		—
6) Ծաղկաքաղ, առաջին շրջան (բ. տպագր.) 1884 . . .—		—
7) Բառացուցակ առաջին ծաղկաքաղի համար. Թիֆ. 1885.—		—
8) Մտեփաննոս Օրբէլեանի Ոդը ի Ս. Կաթուղիկէն էջմիածնի. Թիֆլիս 1885. գինն է. . . . . .—		30
9) Հայոց վանքերը. Մոսկով 1886. գինն է. . . . . .—		50

Ա Յ Լ Ե Ի

ՏԻԿԻՆ ՄԱՐԴԱՐՏԻ (Տէրո-ի կոպանեանց)

հետևեալ թարգմանութիւնները. — Ռ. կ

1) ՅՈՎՀ. ԳՈԻՏԵՆԲԵՐԳ, տպագրութեան հնարողը. գ. .	—	15
2) ԴՕԿՏ. ՋԷՆՆԻԷՐ, ծաղկահատութեան հնարողը. գինն է .	—	20
3) ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, հայ երեխաների համար (15 թատերախաղ), փոխագրութիւն, գինն է.	1	—

Վաճառվում են Թիֆլիզում «Կենդրոնական գրավաճառնոցում» և Կարապետ Կոստանեանցի մօտ Ալէքսանդրապօլում։

Ձանապարհածախսը գնողներն վրայ է։

(73) (5—5)

ՍԱՐԱՏՈՎԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԻՐԵՐԻ

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ

(Թիֆլիզ, Սօլօլակի փողոց, տուն Ազաբաբեանցի)

ԸՈՒԻԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

«Ա. ԲԵՆԴԻՐ և ՈՐԴԻՔ, Ը. ՍՏԵՊԱՆՈՎ և Վ. ԲԵՆԴԻՐ»

ՍԱՐՊԻՆԿԱՆ կտաւի մի ընտիր տեսակն է, որ ձեռքով է գործվում նորը անգլիական բամբակեայ մատնից. տեսքով շատ նման է բատիստի և զեփիւրի, իսկ արժանաւորութեամբ և գոյների դիմացկունութեամբ գերազանց է նրանցից։

ՍԱՐՊԻՆԿԱՅԻՑ կարում են կանանց համար շատ գեղեցիկ, թեթև դերիաներ, կապօտներ, կօֆտաներ, յերեկուայ և գիշերուայ շապիկներ, երեխայոց համար շորեր և տղամարդոց համար շատ վայելուչ շապիկներ։

ԳՆԵՐԸ ԺՈՂՈՎՈՒՆ ՀՆԱՐ ԵՆ. ՄՂՇԻՆԸ 12-ԻՑ ՑԵՆՔ 45 ՔՈՊԵԿ։

Այն օտարազգացիք, որոնք ցանկանում են ունենալ մեր կտաւները կարող են նմուշներ պահանջել, ուղարկելով ապահովեալ նամակով երեք օրէնքը կոպէկանոց մարկա։

Պ. Պ. ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ ՐԻՒՄԱՐ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՄԱՆՆԵՐ

(127) (18—2)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ

1. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԵՆՑԻՆ

ԵՒ

ՒՐ ՏԱՂԵՐԸ

2. ՆՈՐ ՓՈՂՈՎԱԾՈՒ

Ա. ՊՐԱԿ

3. ՆՈՐ ՓՈՂՈՎԱԾՈՒ

Բ. ՊՐԱԿ

(123) (5—2)

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Ց

ՀԱՄԱՌՕՏՍՊ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Օ Ր Բ Է Լ Ի

Սօլօլակակայա փողոց, սեպհական տանը №№ 14—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ { առաւօտները 8 — 12 ժամը. / երեկոները 4 — 6 ժամը։

Իսկ կիւրակի և տօն օրերին առաւօտեան 8 — 2 ժամը կէսօրից յետոյ։

(2) (150—125)

Մ Ր Յ Ո Ղ

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(ВѢНСКІЙ МАГАЗИНЪ)

Գօլօվինակից պրօսպ., Ռաչլին գիմնազիայի հանդէպ, տուն Մդիվանիի

Ստացել ենք ՄԵԾ ԿԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ աշնանային և ձմերային ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ամենավերջին ձևի։

Գները՝ ամենքին մատչելի են և անհամեմատ աւելի աժան՝ քան անցեալ տարինները։

Խոտովերբեան եղբայրներ։

(82) (40—24)

Թ Իֆ Լ Իզ Ո Ւ Մ

ԲՈՐՋՐԱԴՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ՕՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄԱՆ

Գեղագործական և կոսմետիքական ապրանքներ։

ԱԽՏԱՆԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ. լիզոլ, կարբոլեան թթուաւտ բնական և պատճ, քլորային կիներ, երկաթեայ արջասպ, մարդանցի թթուաւածին, ծծումբ, կրէօլին։

Վերմօրելի հիդրօպուլտեր և ախտահանութեան զանազան սիստեմներ սրսկիչներ։

ՔԱՑԱԽԻ ԷՍԵՆՑԻԱ ամենաընտիր տեսակի։

«ԿԱՅԾԱԿ» ամենալաւ միշտ մետաղների մաքրելու համար, յատուկ պատրաստած մեր գործարանում. արկղիկներով և ծրարներով 1/2 և 1/4 ֆունտանոց։

ԱՆԽԱՒՈՒՆ ԼԱԿՐԻՑԻՆ, սեպհական շոգեգործարանի։

ՇԱՓՎՈՒՄ Է ՄԵՆՔ ՈՒ ՓՈՔՐ ԿԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Գրասենեակը և պահեստները Թիֆլիզում, Մեծ Վօդօվօզնի փողոց, սեպհական տանը։

Ունի հաղորդում բաժանմունք.

(118) (50—7)

Գօլօվինակի պրօսպեկտի վրայ, Ռէյտերի տանը, «Սաբադուրի» հիւրանոցի կողքին, յետոյ փեղով վաճառվում է

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՍՈՒՐՃ (ԿՕՓԷ)

ամեն տեսակ—ծէծաղ, բուլճ, հոտ և այլն։

(114) (5—4)

ԳՕՆՆԷՐ ԵՒ ԼԱՅՑ

ԺԻՐԱՐԴՈՎՍԿՈՒ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԽԱՆՈՒԹ

Դվօրցովի փողոց, կալուածական բանկի քարավանսարայ

ՍՏԱՑՈՒԱԾՔ Է

ՔԱԹԱՆ, ՍԵՂԱՆԻ ՁԵՐՄԱԿԵՂԷՆ

կանանց և տղամարդկանց համար ձերմակեղէն։ Բրդեայ և մետաքսեայ վերմակներ։

ՕԺԻՏ

(124) (20—2)

Ոսկէ մեդալ Թիֆլիզ 1889 թ.

Ոսկէ մեդալ Կազան 1890 թ.



Դ. Զ. ՍԱՒԱՋԵԻԻ

ԳՕՐԾԱՐԱՆՆԵՐ

ԹԻՖԼԻԶՈՒՄ

ՀԱՅԻ ԱՐԱՂ, ՄՈՒՐՏ, ԿՕՆԵԱԿ, ՌՕՄ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼԻԿԵՕՐՆԵՐ։

Պէտք է դիմել.—Въ главную контору Д. З. Сарajжева въ Тифлисѣ.

(117) (50—5)

Յ. ԹԱՅԻՐԵԱՆՑԻ ԵՒ Կ. ԱԼԻԽԱՆԵԱՆՑԻ

ՍԱՊՈՆԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆԸ

ԹԻՖԼԻԶՈՒՄ

Յայտնում է, որ պատրաստում է ընտիր տեսակի ՍԱՊՈՆ լուացքի համար.—պտուղներից պատրաստած՝ նշէ և ժամանակակից։

Փոքր քանակութեամբ, այն է մէկ և հինգ ֆունտանոց կտորներով վաճառվում է Կովկասեան գեղատնային ընկերութեան խանութում և հետևեալ՝ սեպհական վաճառանոցներում.—ա) Սալդատսկի բազար, տուն Բուղդանեանի, բ) Օլգինսկայա փ. տուն Մէբուրնութեանի, գ) Թուրքի մէյդան, քաղաքային բուդկան, դ) Հաւլաբարի հրապարակի քաղաքային բուդկան։ Իսկ արկղներով մեծ քանակութեամբ վաճառվում է գործարանում երևանեան լճափնդու վրայ սեպհական տանը։

(110) (5—5)

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՊՐՈՆԱԿԱՆ

ԴԵՊՕ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՆՕՏԵՐԻ

Մատակարար Աբքունի թատրոնի և Արտիստիք. ընկերութեան,

ՌՈՅԵԱԼՆԵՐ ԵՒ ՊԱՆՏՆԱՄՈՒՐՆԵՐ

Պետերբուրգի գործարանների

Կ. Մ. ՇՐԵԳԵՐԻ—արքունի գործարան, ԵՂԲ. ԴԻՊԵՐԻԻԻ և ՍՄԻՏՑ ՎԵԳԵՆԵՐԻ։ Ինչպէս լիշեալ գործարանների միակ գործակալ Կովկասում, Թիֆլիսում, ես իմ երաժշտական դեպօում ունիմ մեծ քանակութեամբ դաշնակներ և դաշնամուրներ։

Ջուլեաներ, ալտեր, վիոլոնչելներ, էնգլեռներ, կլառնետներ, ֆլեյտաներ, չելեստաներ, լիրեր, նօտեր և երաժշտական գործիքների բոլոր պարագաներն առաջարկում եմ մեծ քանակութեամբ։ Գները գործարանային։ Վաճառում եմ հատով և մեծ քանակով։ Գները կարելի է վճարել մաս առ մաս։ Օտարերկրացիների պահանջները կատարում են անմիջապէս։ Գնած իրերն ընդունում են ուղարկելու տրանսպորտային ընկերութիւնների սակաղնով։

Музыкальное депо Б. Мириманяна.

Тифлисъ, Дворцовая ул.

(62) (20—15)

Дозволено цензурою, Тифлисъ, 19 Ноября 1892 года.

Տպարան Ց. Մարտիրոսեանցի։

Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул. д. № 1—2